

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՇԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁԱՉՈՂՈՎԻ ՆԻՍՅԸ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեքտարթի, 15 Հոկտեմբեր 1963ի երեկոյան ժամը 5ին, Ս. Յարութեան Տաճարի նարգաւահեան կեդրոնական Յանձնաժողովը, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի մէջ գահին մէջ, գաւառքեց իր առաջին նիստը, նախագահութեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին՝ Ա. Օ. Տ. Վազգէն Ա. իւ

Ներկայ եղան Յանձնաժողովի անդամներէն.

ԱՄԵՆ. Տ. ԵԼԻՇԵ ԱՐՔԵՊՈ. ՏԵՐՏԻՐԵԱՆ, Պատրիարք Ա. Կուսադէմի

ԳԵՐԵ. Տ. ՄԻՌՆ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Առաջնօրդ Միացեալ Նահանգաց

» Տ. ԱՅՐՈՎԵԼ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Կաթ. Պատուիրակ Աւրողայի

» Տ. ԲԱՐՖԻԿՆ ԵՊՈ. ԱՊԱՏԵԱՆ, Կաթ. Պատուիրակ Հարաւայիթ Ամերիկայի

» Տ. ԹՈՐԴՈՄ ԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Առաջնօրդ Միացեալ Նահանգաց Արևմտեան Թեմի

» Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊՈ. ԱԲՐՈՋԱՄԵԱՆ

ՏԻԱՐ ԱԼԵՔԾՈ ՄԱՆՈՒԿԵԱՆ, Տիրոյր (Միացեալ Նահանգներ)

ԶՈՐ. ԱԱՐԳԻՍ ԶԱՐԴԱՐԵԱՆ, Պոսրըն (ա ա)

ՏԻԱՐ ՃԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ, Լու Աննելը (ա ա)

ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՀԻՒՍԽԵԱՆ, Միլան (Աւրողա):

Ժողովը մեծամասնութիւն կազմած ըլլալով օրինաւոր իր աշխատանքին սկսուել Առաջին առթիւ կազմուեցաւ կեդրոնական Յանձնաժողովի մասյան Դիւտոնը, ըստ հետևողին. —

ԳԵՐԵ. Տ. ՄԻՌՆ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ատենապիտ

» Տ. ԲԱՐՖԻԿՆ ԵՊՈ. ԱՊԱՏԵԱՆ, Ատենապիտ

ՏԻԱՐ ԶԱՐԴ ԳԱՐԱԿէԶԶԵԱՆ, Կանագարան

Ապա որոշուեցաւ արտասահմանը բաժնել 5 շրջաններու, և իւրաքանչիւրին համար ընտրել Փախ-Ատենապիտ մը: Պատ. Ժողովը ներկայացուած առաջարկներուն վրայ ընտրութիւնները կատարեց ըստ հետեւելին.

Հիւս. Ամենրիկայի Արեւելեան թեմին՝ Պ. ՀԱՅԻ ԳԱՎՈՒԹՃԵԱՆ

» Արեւելեան թեմին՝ ԳԵՐԵ. Տ. ԹՈՐԴՈՄ ԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հարաւ. » Թեմին՝ ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆէՍ ՏԻԱՐՊէՔԻՐԵԱՆ

Եւրոպայի շրջանին՝ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՀԻՒՍԽԵԱՆ:

Իսկ Միջին Արեւելքի համար Փախ-Ատենապիտ նշանակելու պարտականութիւնը վըստահուեցաւ Երուսաղէմի Հայոց Ամեն. Պատրիարք Հօր, ինչպէս նաև այս շրջանի մէջ հանգանակութեան կազմակերպութեան աշխատանքը:

Նկատի առնուեցաւ նաև, յետ Դիւտոնի կազմին ընտրութեան, չեմերը ստորագրելու հարցը, ու Պատ. Ժողովը որոշեց որ Պր. Զարլզ Գարակէօգեանի ստորագրութիւնն հետ չեմերու վրայ երեխն նաև ստորագրութիւնները Տիար Հայկ Գալվուքճեանի և Տատուր Տատուրեանի, Նիւ Եորքէն:

Նախագահ Վեհափառ Հայրապետի թելադրութեան վրայ, Ժողովը նաև որոշեց Նախագահ Վեհափառ Հայրապետի թելադրութեան վրայ Երեխն նաև ստորագրութիւնները Տիար Հայկ Գալվուքճեանի և Տատուր Տատուրեանի Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան կեդրոնական Յանձնաժողովը նոր ընդունակի Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան կեդրոնական Յանձնաժողովը նոր

անուններով։ Առաջարկուեցան այս ուղղութեամբ հետեհալ ազգայինները և ընդունաւեցան ժողովի կողմէ։

ՏԻԱՐ ԵՒՌՈՒԱՐԴԻ ԻՒԹԻՒՃԵԱՆ, Փարիզէն

» ՍՏԵՓԱՆ ՄԻԼՊԵԱՆ, Միլանօ

» ԱՐԾՐՈՒՆԻ ԶԲԲԱԾԵԱՆ, Մարակլ

» ՄՈՒՇԵՎ ՃԻՑԻՇԵԱՆ, Մոնախօ։

Ժողովը ապա անդրագարձաւ Յանձնաժողովի պարտականութեանց և նպատակին, հանգանակութեան աշխատանքի եղանակին և բաժանումին և հանգանակուած գումարներու կեդրոնական հարցերուն և տուաւ համապատասխան որոշումներ։

Հստ որում Յանձնաժողովը պարտականութիւն ստանձնեց գոյացնել մէկ միլիոն տալարի գումարը, որ մէր եկեղեցւայ բաժինն է (1/3ը) Ս. Յարութեան Տոմարի նորոգութեան նախատեսուած ծախուց մէջ և որոշեց քոթաններ նշանակել իւրաքանչիւր հանգանակութեան շրջանի համար։ Ու որոշում կայացուց որ հանգանակուած գումարները հաւաքուին նիւ Եորք, Գանձապահ Զարլզ Գարակէօգեանի մօտ։

Պատ. Ժողովը նաև վերահսու եղաւ ծախուց վճարման կերպին, որ պիտի կատարուի համաձայն (Common Technical Bureau)ի ներկայացուցած հաշուեցուցակին։ Այդ հաշուեցոյցերը անմիջապէս պիտի վճարուին երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի կողմէ և ապա ներկայացուելով նիւ Եորք պիտի ստացուին համապատասխան գումարները հոն հաւաքուած հանգանակութեան Փոնտէն, հետեհալ կերպով։

Հաշուեցոյցին ներկայացուցած գումարին 1/3ը, ըստ համաձայնութեան, 1964 Յունուարէն սկսեալ պիտի վճարէ կիւրպէնկեան Հիմնարկութիւնը, որ վճարած է ցարդ բոլոր նորոգութեանց ծախքերը, իսկ մեացիալ 2/3ը պիտի վճարուի Համազգային Յանձնաժողովի յառաջացուցած Փոնտէն։

Ապա Շահէ Վերդ. Ամէմեան, յանուն Երուսաղէմի Պատրիարքութեան Նուրիակութեան, Պատ. Ժամանակին ներկայացուց Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան վերաբերեալ պատմական փաստեր, որոնք կը հաստատեն անոր Համազգային չտիանիշով կատարուած ըլլալու իրողութիւնը, հեղինակաւոր գլխաւորութեամբ Ամենայն Հայոց կաթողիկոսին, ու ընդգծեց նոր հանգանակութեան պարագային ու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին անմիջական հետաքրքրութեան և առաջնորդութեան բարերար դերը, ձեռք բերուելիք յաջողութեանց մէջ։ Անոր սրբատառ կոնդակով զօրացած գացինք, ըստու, Միացիալ Նահանգներ ու շրջելով եկեղեցիէ եկեղեցի ու կազմելով տեղական հանգանակիչ յանձնախումբեր սկսոնք գործի։ Յայտնեց թէ իրենց գործունէութիւնը հոն յաջողութեամբ պատկուեցաւ, ու 7 եկեղեցական համայնքներու մէջ արդէն գոյացաւ հարիւր քառանկից հազար (126.000) տոլարի գումար մը, բացի մասնաւոր մեծագումար խոստումներէ, զորս կատարեցին յարգարժան ազգայիններ, որոնց ցանկը կը տրուի ստորև։ —

Պատրակէօգեան Հաստատութիւն 60.100 Տոլար

Վարդանանց Ասպետներ 20.000 »

» » Տիկնանց 2.000 »

Թուղթասեան 15.000 »

Գավութքնեան 20.000 »

Տատութեան 15.000 »

Զարդարեան 10.000 »

Ասլիկնեան 10.000 »

Հ.Բ. Լ. Մ. 100.000 »

Յայրախութիւն և ի գոհաւթիւն Պատ. Ժողովին, Միլանոյարնակ ազգային բարերար Տիկն Երուանդ Հիւսիսեան յայտարարեց որ Միլանոյի փաքրաթիւ Հայ դաշտութ որոշած է գոյացնել համազգային այս հանգանակութեան համար 60.000 տոլար, որուն 45.000 տոլարը արդէն իրականացած է հետեհալ կերպով։ —

Տիար Երուանդ Հիւսիսեան	25.000	Տալար
» Յ. Սէֆէրեան	10.000	»
» Ստեփան Սրապեան	5.000	»
Տիկ. Մօնա Խաղիշեան	5.000	»

Յետ այս զեկուցման վաւերացուեցաւ իւրաքանչիւր շրջանի համար մասնաւոր քոթո մը ըստ հետեւելին:

Արևելեան Թեմի Հիւս. Ամերիկայի	350.000	Տալար
Արևելեան Թեմի	»	»
Եւրոպայի Թեմի	150.000	»
Հարաւ. Ամերիկայի Թեմ	75.000	»
Միջին Արևելքի շրջան	75.000	»

Որոնք միացած կիւլպէնկեան Հիմնորկութեան 300 հազար առլար յանձնուութեան հետ պիտի իրականացնեն 1 միլիոն տոլարի նշանակէտը:

Այս առթիւ նուե Պատ. Ժողովը ուշագրութեան առաւ և որաշեց կարեոր հետեւել հարցը, որուն տեղական յանձնախումբներու կազմութեան մասին իւրաքանչիւր շրջանի մէջ տեղեակ պահուի Պատ. Համազգային Յանձնաժողովի Վեհափառ Նախադասիւ Ամենասպատիւ Փախ-Նախագահուը:

Ժողովը նկատի առնելով Տ. Շահէ Վրդ. Ամէմեանի առաջին առաջարկը, որոշեց որ հանգանակութեան ժամանուկն ու եղանակը կորդագրուին և ճշգուին իւրաքանչիւր հանգանակութեան շրջանի պատկան Ազգային-Եկեղեցական իշխանութեանց հետ:

Երկրորդ առաջարկը, Վեհափառ Հայրապետի ստորագրութեամբ կոչ մը ուղղաւի հազարգրագրութեան ձևով համայն Հայութեան Հանգանակութեան վերտարեմամբ, ուր արձոնագրուի պատմակոն այս եղելութիւնը, որ գումարում է Պատ. Համազգային Յանձնաժողովին ընդ Նախագահութեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, յիշատակուին ցարդ կատարուած յաջողութիւնները հանգանակիչ նուիրակութեան ձեռքով և ըլլոյթ թելագրութիւն ընդհանուրին որ լիսաբրու և առատաձեռն մտսնակցի այս նուիրակուն գործին; որպէսզի պաշտպանուին մեր գարաւոր, որբազան իրաւունքները, միջոզգային քրիստոնէական մհծոգոյն սրբատեղւոյն մէջ անկորուստ: Յարմար նկատուեցաւ նուե որ յատաձգուին բոլոր տեղական նախաձեռնութիւնները թեմիրէն ներս և առաջնուներթ կարեռութիւն տրուի Ս. Յարութեան Տաճարի սորոգութեան հանգանակութեան:

Պատ. Ժողովը նուե խորհեցաւ հանգանակութեան մտսնակցող նուիրատուները պատուել որոշ հաստատագիրով մը և յետ խորհրդակցութեանց և կարծեաց փախանակութեան, յանդեցաւ հետեւել եղբակացութեան և վուերացուց զայն:

ՊԱՏՐԱՍՏԵԼ ծննդականոր ԿերՊԱՎ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՄԸ, ՈՐ ԾԱՌԱՅԻ ՆԱՅԻ ԻՐԱՍՏՈՒՆԵՐՈՒԻՆ, ՄԻՇՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՎ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒԻՆ ԳՈՒՄԱՐԸ:

Ժողովը ապա լսեց Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ հարաւարապես Պր. Եղուարդ Խւթիւնեանի զեկուցումը, ի մասին Ս. Յարութեան Տաճարի շինութեան և դարեկրու ընթացքին ստացած փոփոխութեանց պատմական իրազութեանց շուրջ և ապա կարելի մանրամասնութեամբ հակիրճ կերպով բացատրեց հան կատարուող նորոգութեանց աշխատանքներու կերպին ուղղութեան և նկարագրի մասին:

Երեկոյան ժամը 8.15ին Նախագահ Վեհափառ Հօր ազօթքով և օրհնութեամբ փակուեցաւ Համազգային Յանձնաժողովի պատմական այս նիստը:

ԴԻԱՆ
Ս. ԱԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԴՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ